

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՄԻՄԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՏԱԿՈՒՆԵՏ՝ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ԱՄԲԻՈՆ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵԹՈՂԻԿԱ**

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ

**ԹԵՄԱ՝ ԶԱՆԳՎԱԾՍՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
/THE ROLE OF MASS MEDIA MEANS IN THE PROCESS OF SOCIALIZING JUNIOR SCHOOL-CHILDREN/**

ՄԱԳԻՍՏՐՈՍ՝ Նուեմ Վանիկի Արոսյան

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ մ.գ.թ., դոցենտ Է.Յու Ավանեսով

Հետազոտության արդիականությունը: Փոխակերպվող ներկայիս հասարակության պայմաններում մանկավարժության և հարակից այլ գիտությունների կարևորագույն խնդիրներից է համարվում հատկապես աճող սերնդի վրա զանգվածային հաղորդակցական միջոցների (ԶՀՄ) ազդեցության ուսումնասիրությունը: Զանգվածային հաղորդակցման միջոցների շարքում մարդու պահանջմունքների բավարարման համար առավել մեծ են համակարգչի, հեռուստատեսության, գրքերի և այլն, հնարավորությունները:

Գրական աղբյուրների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ 6–18 տարեկանում դպրոցական երեխան հեռուստացույցի մոտ անցկացնում է միջինում ավելի քան 15 հազար ժամ կամ 2 հազարով ավել, քան դպրոցում ուսուցման գործընթացում: Սրան պետք է ավելացնել նաև այն, որ այս գործընթացը հաճախ չի վերահսկվում մեծահասակների կողմից: Եթե դեռահասները, պատանիները կամ մեծահասակները կարող են քննադատորեն գնահատել այն, ինչ առաջարկվում է նրանց ԶՀՄ-ներով, ապա կրտսեր դպրոցականը դա անել չի կարող: Վերջիններս ոչ միայն դիտում են տարբեր ԶՀՄ-ների կոմից առաջարկվող նյութերը, այլև հնարավորինս կլանում և ուսումնասիրում են այդ ամենը:

ԶՀՄ-ները ազդում են երեխայի անձի զարգացմանը, ձևավորելով նրա միտքը, ճաշակը և աշխարհայացքը: Երեխաների ներաշխարհը դեռևս նոր է ձևավորվում, և այդ գործում էական է այն ամենը, ինչը նրանք ստանում են մեծահասակից՝ խաղերի, հեքիաթների, համատեղ գործունեության արդյունքում, ինչպես նաև հեռուստատեսության հաղորդումների, համակարգչային խաղերի միջոցով: Այդ իսկ պատճառով կրտսեր դպրոցականների համար նախատեսված ԶՀՄ-ները պետք է կրեն ոչ միայն ժամանցի, այլև (կամ նախևառաջ) դաստիարակչական բնույթ:

ՉՀՄ-ների ազդեցության հետևանքով արդի ժամանակաշրջանի կարևորագույն հիմնախնդիրներից են դառնում տեղեկատվության ահռելի քանակն ու դրա անվերահսկելիությունը: Այս պայմաններում շարքային մարդուն դժվար է ընտրություն կատարել եղած տեղեկատվության մեջ, և հաճախ պարզապես ստիպված է վստահել որևէ աղբյուրի:

Այս ամենի հետ մեկտեղ ակնհայտ է, որ այս տարիքի երեխաների ուսուցման լավագույն և կայուն միջոցներից է միջնորդավորված ուսուցումը, որը տեղի է ունենում տակապես պատկերավոր ձևով տեղեկատվության ստացման միջոցով: Պակաս կարևոր չէ նաև ՉՀՄ-ների ներգործությունը կրտսեր դպրոցականի մոտ օրինակելի բարոյական կերպարի կերտման առումով:

Ուստի, հաշվի առնելով ՉՀՄ-ների դրական ներգործության փաստերը, առօրյայում վերջիններիս ներգործությունից առավել կարևոր է դրանց ճիշտ կիրառումը հենց կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացում, ինչն կարող է բարձրացնել նաև հատկապես այս տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության արդյունավետությունը:

Նշենք, որ չնայած թեմայի արդիականությանը մասնագիտական գրականության մեջ բավականին քիչ են, կամ գրեթե չեն հանդիպում հիմնարար տեղեկություններ, որոնք կապված են կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում ՉՀՄ-ների ազդեցության առանձնահատկությունների ուսումնասիրման հետ:

Հետազոտության նպատակն է պարզաբանել ՉՀՄ-ների դերը կրտսե դպրոցականների սոցիալականացման գործում:

Հետազոտության նպատակին հասնելու համար մեր կոմից առաջ են քաշվել և լուծվել հետևյալ հիմնական **խնդիրները՝**

Ուսումնասիրել **կրտսեր դպրոցականների տարիքային և հուզական ոլորտի առանձնահատկությունները:**

Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում ՉՀՄ-ների դերի ուսումնասիրման հայրենական և արտասահմանյան փորձը:

Պարզաբանել կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացի վրա ներգործով հիմնական ՉՀՄ-ները:

Բացահայտել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների վրա ՉՀՄ-ների ներգործության առանձնահատկությունները

Հետազոտության օբյեկտն է. կրտսեր դպրոցականների սոցիալականացման վրա ՉՀՄ-ների ներգործության առանձնահատկությունը:

Հետազոտության առարկան է համակարգչի, հեռուստատեսության, գրքերի և զանգվածային հաղորդակցման այլ միջոցների ազդեցությունը կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացի վրա:

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ ՉՀՄ-ների ակտիվ ներգործության պարագայում կրտսեր դպրոցականների մոտ կձևավորվեն ու կզարգանան նրանց սոցիալականացման գործում առավել անհրաժեշտ անհատական բնութագրերը:

Հետազոտության գիտական նորույթը: Բազմակողմանի ուսումնասիրվել է կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում ՁՀՄ-ների դերը: Մասնավորապես պարզաբանվել են կրտսեր դպրոցականների տարիքային, հուզական ոլորտի առանձնահատկությունները, հեռուստատեսության ազդեցությունը այս տարիքի երեխաների հուզական ոլորտի զարգացման վրա, ՁՀՄ-ների դերը նրանց կրթական համակարգում և սոցիալականացման գործում:

Հետազոտության տեսական նշանակությունը: Աշխատանքի տեսական նշանակությունը պայմանավորված է կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում ՁՀՄ-ների դերի վերաբերյալ տեսական դրույթների հստակեցմամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը որոշվում է կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում ՁՀՄ-ների դերի բարձրացմամբ, որը թույլ կտա էականորեն բարելավել այս տարիքի երեխաների այնպիսի անհատական բնութագրերի, բարոյականային հատկանիշների զարգացման մակարդակը, որոնք առավել անհրաժեշտ են նրանց սոցիալականացման գործում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են մանկավարժական գիտության հետևյալ սկզբունքները՝ դաստիարակության՝ մարդասիրական, անհատական առանձնահատկությունների հաշվառման, ուսուցման՝ զննականության, մատչելիության, համակարգվածության և հաջորդականության, ինչպես կրտսեր դպրոցականների սոցիալականացման հիմնական դրույթները:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթներն են՝

Կրտսեր դպրոցականների առոյալում ՁՀՄ-ներից արդյունավետ օգտվելու վերահսկողությունն ու կառավարումը նրանց սոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղություններից է:

ՁՀՄ-ները ազդում են երեխաների մոտ գիտելիքների ստացման, հասարակական կարծիքի, փորձի ու մշակութային արժեքների ձևավորման վրա:

ՁՀՄ-ների առավել մեծացող ազդեցության պայմաններում հատկապես կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելիս կարևոր է վերահսկել և ճիշտ կառավարել դրանցով փոխանցվող տեղեկատվության ծավալը:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Մագիստրոսական թեզը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, 34 աղբյուր պարունակող օգտագործված մատենագիտական ցանկից, ինչպես նաև՝ 1 հավելվածից: Աշխատանքը կազմում է 67 մեքենագիր էջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնախնդրի տարբեր հայեցակետերի տեսական ուսումնասիրությունների և փորձարարական հետազոտությունների արդյունքում հնարավոր եղավ կատարել հետևյալ եզրակացությունները՝

1. Գրական աղբյուրների ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ ներկայումս ՀՀ-ում կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում ՉՀՄ-ների դերը բավարար մակարդակով բացահայտված չէ և հետագա ուսումնասիրման կարիք ունի:
2. Պարզվել է, որ կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացի վրա ՉՀՄ-ներ ներգործության աստիճանը բացահայտելու համար պետք է հաշվի առնել երեխաների տարիքային, հուզական առանձնահատկությունները:
3. Հայրենական և արտասահմանյան փորձի ուսումնասիրումից պարզ դարձավ, որ հեռուստատեսության ու մուլտֆիլմների ազդեցությունը կրտսեր դպրոցականի անձնային, հուզական ոլորտի զարգացման վրա պետք է մշտապես վերահսկվի մեծահասակների կողմից:
4. Գրականության աղբյուրների վերլուծությունից պարզվեց նաև, որ կրտսեր դպրոցականների ընթերցանական գործունեության կայացման գործընթացը արդի պայմաններում կարող է դառնալ առավել արդյունավետ, եթե աշխատանքների համակարգում հաշվի առնվի երեխայի նախադպրոցական և արտադպրոցական աուդիովիզուալ փորձը, հիմնվելով դրա վրա ու գրագետ կիրառելով ՉՀՄ-ները ընթերցող երեխայի ձևավորման գործընթացում:
5. Պարզ դարձավ, որ երեխաների կողմից էկրանային ստեղծագործությունների վերաբերյալ դեռևս նախադպրոցական տարիքում ձևավորված նախ-իրատեսական ընկալման պասիվ փորձը հաղթահարելով անհրաժեշտ է խթանել կրտսեր դպրոցականների կոմից գրականության և ընդհանուր առմամբ արվեստի ամբողջական ընկալման կայացմանը:
6. Կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացի վրա ներգործում են հետևյալ հիմնական ՉՀՄ-ները՝ հեռուստատեսային նյութերը, տեսանյութերը, ձայնագրությունները, համակարգչային նյութերը, պարբերական մամուլի նյութերը, գրքերը:
7. Գրականության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որպես դպրոցում ՉՀՄ-ների կիրառման նոր մոտեցում հանդիպում է մեդիագրագիտության դասերը, որոնք սակայն հիմնականում նախատեսված են բարձր դասարանների երեխաների համար;
8. Ենթադրվում է, որ «Մեդիագրագիտություն» ուսումնական առարկան դասավանդելու են թեմայով հետաքրքրված, տեղեկացված ուսուցիչները, ովքեր պատրաստ են և ցանկանում են ինքնակրթվելով հարստացնել ոչ միայն իրենց գիտելիքները, այլև դասընթացի նյութերը:
9. «Մեդիագրագիտություն» ուսումնական առարկան սկսելիս պետք է հաշվի առնել նաև Հայաստանի դպրոցների տեխնիկական հնարավորություններն ու ուսուցիչների

պատրաստվածությունը տվյալ ոլորտից. ըստ այդմ, դասերը հնարավոր է անցկացնել անգամ միայն համակարգիչ, լուսանկարող-ձայնագրող սարք օգտագործելով: Դրա հետ մեկտեղ, եթե ուսուցիչը բանիմաց է, և դպրոցն ունի անհրաժեշտ տեխնիկա, կարելի է ավելացնել արտադրական մասը և մեղիա քննադատությունը սովորել մեղիաարտադրանք պատրաստելով:

10. 10.Անկետային հարցման տվյալներով կրտսեր դպրոցականների կրթական համակարգում ՁՀՄ-ների ակտիվ կիրառման դեպքում երեխաների մոտ կարող են ձևավորվել կամ բարելավել գթասրտությունը, ընկերասիրությունը, դիմացինի հանդեպ հարգանքը, հաղորդակցվելու ընդունակությունը, կամքը, վստաությունը, ինքնուրույնությունը և այլ դրական անհատական բնութագրեր:
11. Պարզվել է, որ կրտսեր դպրոցականների կրթական համակարգում ՁՀՄ-ների ակտիվ կիրառումը կնպաստի երեխաների այնպիսի բացասական անհատական բնութագրերի շտկման, ինչպիսիք են՝ կոնֆլիկտայնությունը, փառասիրությունը, ցրվածությունը, եսասիրությունը, մեծամտությունը:
12. ՁՀՄ-ների դերը կրտսեր դպրոցականների համակարգում կբարձրանա հատկապես այն դեպքում, երբ 21-րդ դարի ուսուցիչը տիրապետի ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին: